

առ ոտս տուն. Պողոսի աստուածաբան վրդ.ի եւ եպիսկոպոսին Ուռհայու՝ աշակերտին տուն. Յովհաննես որոտընդոտս եւ աստուածաբան վրդ.ի եւ պատրիարքի Կ. Պոլսոյ, բազմաշխատ երախտաւորի սրբոյ տանս և ի ներկայումս զՆերմեռանդ կրթումն ի նոյնս եւ զսիրով հայեղն ըստ հանճարեղ բարեմտութեան եւ բարեզարդութեան անձինն սրբասիրի, որ յամ.ի էր ցուպ ձերութեան իմոյ.» (քաղուած ՌՄԷ (=1758) թուական Վկայական գիրքէն Թէոդորոս պարք. Տարոնցիի): Սիմէոն՝ եպս. կը ձեռնադրուի 1762 Նոյ. Ժը.ին Յակոբ կթղ. Շամախեցիէն: Ղազար Զահկեցիի Դրախտ Յանկաղի գիրքին մէջ ան ունի հետեւեալ ինքնագիր յիշատակարանը. «Յիշատակ է զիրքս Սասընցի գիւղէն Նջեցի Սիմէոն եպս.ին. ի Ս. Յակոբայ գրքատունն որ յմ. եւ ըստ իւրոյ կտակին չունի ոք իշխանութիւն հանելոյ զսա ի սրբոյ Աթոռոյս. վայելողքդ եւ օրինակողքդ ասացէք Ած. ողորմի ի ՌՄԺԷ թվին հայոյ (= 1768):

ՍԻՄԷՈՆ ԵՊՍ. ՊԱՐՈՆՏԷՐ. — Մբ. 1661ին ՏԲ. Յովհ. Խիզանցի այս Սիմէոն եպս.ի համար ընդօրինակած է Շարական մը:

ՍԻՄԷՈՆ ԵՊՍ. ՍԷՖԷՐԵԱՆ, ՄԻՋԱԳԻԻԴՅԻ (ԿԷՅՎԷ). — Մբ. Ծ. 1827ին. աւագանի անունը Մանուկ. Զո. 1857ին. շինութեամբ (1855—59). ՏԳ. (1859—60). անգամ վանական Տնտեսական խորհրդոյ (1861—62). փկե (1864—69). կը ճամբորդէ Եւրոպա, մինչև Աւստրիա (1864—67). վանական գործերու կարգադրութեան համար կը մեկնի Մոսկուա, և 1867ին կ'ուղեկցի Գէորգ Դ. կթղ.ին մինչև Էջմիածին ուր եպս. կը ձեռնադրուի և նոյն տարին կ'ստանայ սրբուհւոյն Աննայի Ասպետութեան պատուանշանին բ. աստիճանը, բ. անգամ փկե 1869 ին. պատուիրակ ընտրութեան Կիլիկիոյ Մկրտիչ կթղ.ին՝ Յովհաննէս Ֆրէնկեանի հետ 1871ին, կը վերադառնայ Ս. Յակոբի վանքը և վերստին կ'ընտրուի անգամ Տնտես. Խորհրդոյ և Ատենապետ Միաբ. Ընդհ. Ժողովի (1871—74). գ. անգամ փկե (1874—1896). Ս. Աթոռի կալուածոց քննիչ Եպիսկոպոսի մէջ 1879ին. պարք. Տեղապահ և արքեպս. 1888ին. կը վախճանի Պոլսի մէջ 1896ին. Ս. Յակոբի վանքին յիշատակ կուտայ 170 հատ բումելի երկաթուղիի արժեթուղթեր:

ՍԻՄԷՈՆ ԵՊՍ. ՎԱՆՅԻ. — Մբ. Նւ. Վանայ 1802ին. (տե՛ս